

## ԷՋ ՄԻ ՅՈՒՇԱԴՐՈՒՄ

(1896)

Խօթ ժամ նախապարհի վրայ և Մալխազան գիւղն

**Կ**անչաղարդ յունիսի գեղեցիկ առաւտօն մ' էր. զեր լցուը շացուած՝ Մալխաստի խոսրովա զիւղին տան մի մէջ հաւաքուեր էին արը և կանայք, պատանիներ և օրիորդներ՝ իրենց վերջին ողջերթը մազթելու մեղի։ Մեր բարեկամներէն քանի մը կորիճ երիտասարդներ, հազած կէս-քրդական հեծեալի համազգեստներ, արդէն խակ պատրաստ՝ իրենց աշխայթ նժոյները սանձած՝ կը պատօէին զմեղ ճանապարհ զնելու համար, մինչեւ ուրշեալ սահմանակտ մի հետերնիս դալու։ Մեր ձիերն ալ նոյնակտ թալրուած՝ յանձնուած էին պատանիներու ձեռք, որ զանոնք դրան առջեւ վեր վար կը քայլընէին զրադեցնելու համար, մինչեւ հանէր բաժանման վայրեեանը։ Խսկ մենք՝ մեր հաւաքով լի մամիկներէն ուսած բարեպաշտ սովորութեան համաձայն՝ զնացեր էինց վերջին անգամ ազօթելու մեր եկեղեցւոյն մէջ և յանձնելու զմեղ Աստուծոյ պահպանութեան, յառաջ քանի մեր երկար և վտանգալից ուղեւորութեան ձեռք զարնելը։ Նոյն օրը պէտք էր մենք ինչ ժամ զրեթէ անլոնդ հաս ճամբայ ընէինք. մեր նոյն աւուր զիշերային կայարանն պիտի լինէր խոյ քաշաքէն երեք ժամ հեռաւորութեան վրայ զէպ 'ի հրւսային արեւելեան կողմը զանուած Մալխազան վիւզն, ուր քանի մ'օր ծանօթ բարեկամի մը հիւրասիրութիւնը վայելէ վերջը՝ պիտի անցնէինք Ռուսաստան՝ Զուլ ֆայի քով կարելով Երասմիս սրավալ աիրեները, և անտի ճանապարհնիս յառաջ պիտի տանէինք զէպ 'ի Եւրոպա. գէթ այդ էր այն ժամանակ մեր զիտաւորութիւնն։

Երբ եկեղեցին տան վերապարձաննք՝ արդէն սամալարը եռացման մէջ գտանք, և մեր

նոին նախաճաշն ալ պատրաստ էր՝ չնորհիւ դմեր հիւրասիրող ժիր տանտիկնոյ և վերջին անգամ մեր պազականներու և բարեկամներու խմբին մէջ բոլորած՝ պիտի վայելէ ինց աւանդական պարսկային ազնիւ և չերմ չայը և Սալմաստի ընտրելազպյն սերն ու կարագն ու մեղըր։

Ուշեւորներու շրու երիտասարդ էինք՝ աւելի կամ պակաս տարիքով և զանազան զասակարգի վերաբերեալ, մեզմէ երկուքը բնիկ խոսրով վիւղին էինք, և երկուքը պանզուստ էին Վերջիններէս մին՝ որ մեզմէ շատ աւելի տարիք ունինք, գրեթէ քառասուն ամեայ լինելով, և մեր խմբին զիտաւորն էր, և որոյ համար տիրախառն եռանդինամբ այն տեղ ներս ու զուրս հաւաքուած բազմաթիւ ամբոխն այնքան համակրութեան ցոյցեր կը լինէին, կարնեցի վարդապետ մ' էր, որուն այս կողմերը զարուն և պատիղէն մեկնելուն պատանաներն, ինչպէս նաեւ նորա անձնաւորութեան ծանօթութիւնն և Պարսկահայոց սահմաններում հինգ տարուան ընթացքի մէջ ցոյց տուած գրգռունկութիւնն՝ Յուշազրքիս ուրիշ էջերու կը պատկանէին և Երկրորդ պանզուստն էր երիտասարդ մի Մալխազան զիւղէն, որ իւր զիւղին թուրքերուն տուած նեղութիւններէն պատելու համար՝ իւր ամսւանոյն և պառաւ մօր հետեւ երկու տարիէ վեր այս կողմերս եկած էր, և այժմ ալ լաւազայն կենաց և զորի յուսով՝ պիտի զնար Ռուսաստան՝ փող վաստըլերու։ Նորա ճնողքը վանեցի էին, և այնաեղէն՝ զանազան զըբախառութիւններ կրելէ վերջը՝ զաղթեր էին խոյ գաւասի մէջ և հաստատուեր էին Մալխազան զիւղը, ուր ի՞սպէին խազաղութեամբ, թէպէտ և հազիւ օրապաշտիկնին ճարելով։ Այդ երիտասարդի հայրն վերցիշեալ Մալխազան զիւղին տէրտէրն էր, որ թուականէս զրեթէ ասանուալից տարի առաջ վախճաններ էր, և այն օրէն մինչեւ հիմա այդ զիւղը մնացեր է առանց յատուկ ծխասէր քահանայի։ Այդ երիտասարդը իւր հետ վեր էր տակը վարդապետն՝ իրեւ ճանապարհի ծառապայ, ձրիար մինչեւ Բաթում տանելու պայմանաւ։ — Խսկ երկու ընկերակից խոսրովացիներս

Նայն վարդապետի հետ պիտի գնայինը կոստանդնուպոլիս, և այստեղէն պիտի անցնէին Եւրոպա՝ սովորած ուսումնիս և կրթութիւնին բարձրագոյն հաստատութեան մի մէջ զարդարցնելու նպատակու:

Հասած էր մեկնելու վայրիկեանն. կը սպա-  
սուէր միայն Դավթէմի առաջնորդուկան Ձե-  
ղապահ՝ Յովսէփ Սարանեան վարդապետի  
գալրասեան, որ նոյն օրերը Սարմաստ կը  
գտնուէր և որ և նախինթաց իրիկուն իմա-  
ցուցեր էր կարնեցի վարդապետին, թէ ՚ի  
նշան իւր եղբայրական և համասիրտ բարե-  
կամութեան՝ պիտի զար քանի մը ձիւոր-  
ներով՝ ընկերելու նորա հետ հանդիսապէս  
մինչեւ Մուսանցը զիւղի մօտ, և այստեղ  
ողջրէթի մաղթանաց բաժակներով՝ թարգման  
պիտի լինէր Սալմաստի Հայոց երախտաճա-  
նաշ զզացմանց: Բայց այս առաւոտ փոխա-  
րէն առաջնորդական Ձեղապահին երեւեցաւ  
նորա առողջանզակն, թուղթ մի մասուցանե-  
լով կարնեցի վարդապետին, որով Ձեղա-  
պահն կը ծանուցանէր ցատօր օրսի թէ Մալ-  
մասուն կուսակալին յանկարծական այցելու-  
թիւն մի իւր մօտ այն պահուն, և մհանգա-  
մայն Գարդիմէն սասցուած հեռագիր մի տ-  
մենածանք գրծոյ վերաբերութեամբ՝ արգելք  
կը լինէին իւր մտաց նախինթաց դիտառ-  
ուութեան, որով անձամբ չկարենալով իւր  
համականաց ցոյցերն յայտնել, չնորուալի  
բացարդութիւններով բարի ճանապարհ կը  
մաղթէր կարնեցի վարդապետին, որուն ՚ի  
պատիւ իւր կողմէն աւզարիեր էր քանի մի  
ձիւորներ ուղեկցելու մինչեւ սահմանեալ  
կէտ մը: Կարնեցի վարդապետն ալ թղթով  
իւր շնորհակալութիւնն յայտնելով՝ ինչպեսց  
համեստաբար թէ Ձեղապահին ձիւորներէն  
և թէ սորիշ հեծեալներէն, որ անպատճառ  
իր խարկը համար այնուղ իրեն մնաբը-բա-  
րեաւն ընդունին, Սալմաստի ազգայնոց գէպ  
առ ինքն անեցած զպացմներն իրեն բացա-  
յայտ լինելով, և անկարու նորանոր սիրոյ  
և յարուանաց հանդիսաբար ցոյցերու, որը կա-  
րող լինէին գուցէ, ոչ բարեխոն օմանց մըտ-  
քերու մէջ առիթ արթընցընել ՚ի վսա ի-  
րեն նորանոր զրպարտութիւններ յօրինելու  
և պէտք չեղած տեղեր գրեյրու: Ակամայ

ունաղպատուեցան ձիաւորք վարդապէտի թա-  
խանանանց և խարբին զիջնանելու. այսու-  
հանդերձ քանի մի մսերիմ հեծեալք և հե-  
տիսը մինչեւ կէ ժամու ճնշապարհ մեզի  
ընկերուէ եռ զիցան :

Արդէն ժողովրեան վիրջին աշխամբոյն  
և վարապետի օրհնութիւններն ու լազոյ թը-  
ռուանները միխթարելն ու ամենուն քաջա-  
երութիւն տայն՝ խանուած մեր ծնողա-  
ւրաց և քյորեռ և աղջականաց սրտա-  
ճըմլիկ բաժանման ողբերուն և հեկեկանառն  
համբոյրներուն հետ՝ մեր ամենուս սիրոն ալ  
արտեր էին, և թէպէտ ինցներս ձիերո  
լայ նատած յառաջ կը գնայինց, ոյլ սրբ-  
տերնիս և արտասուալից աչքերնիս զէպ՝ ՚ի  
մեր տնեցիներն ողբած մեր ուղղութեան  
կէմ բնդկէմն ճամբայ կը կորէին:

Հազի՞ թէ խոնտած ամբոխէն ազատուելով՝ համարձակ մկան մեր ձիերը քայլել և մօտենալ գիղի եղերին, և ահա ողորմելի ուսուզով պատառուուն քրջիրու մէջ պատառուած տիրախէմ աղերաւոր աղքատներ և առասպեալ պանդուխուներ՝ գիղէն զուրու ելելու ու ճամբանու ծայրը կտրելով, մէկը ձեռամբարձ ծունր դրած, միւսը գետնի վրայ ճանապարհի լայնութեամբ պարզուած, ուրիշ մը ձիուն սանձը բռնելով, այլ որ աղերասպիր մատուցանելով, ամէն մէկն զանազան կիրքերու մէջ՝ չեն ծոց տար որ փարզապես ձին անցնի և հեռանայ և դրաս վերջին ուղղուք կը ներկայացընէնին վարդապետին Սալահաւէն հեռանալուն զէմ. այդ բաղդան նորանամար էր՝ որ փարզապետի հեռանալով՝ շատ մը Աղքահէն և Վանէն փախած պանզուխտ աղքատներ և տառապեալ կնիիներ, զորս նա միշտ որդիրս և սիրելի եղայրներու կամ ուղյուրերս տիրողութ կը կոչէր, պիտի զրբուկին այնպիսի հոգեւորականէ մը՝ որ իրենց ճանամար թէ հոգեւոր հօր, թէ մարմանաւոր աշշիկ և թէ առատաձեռն ինսամակալի պաշան փարած էր այնքան տարի, իւր աղքատասէր բնաւորութեամբ՝ վարդապետով կեցոց իւր ձին, և միիթարելով զիրենքը և լոյս առաջ թէ «Աստուծով շատ չեմ ու ճանար, կը զանամ զարձեայ ձեր քովը», նոցա ափերուն մէջ զետեղեց ծածկաբար քա-

նակ մը փայլուն մետաղներ, և նոցա ջնոր-հակալութեանց փօխարէն իւր աջը մատուցա-նելով անոնց շրթներուն՝ սիրտն ելած և աշ-քերն արցունքով լեցուած՝ քեց յառաջ իւր ձին և հեռացանք : Տիսրագին պառաւ մի իւր օրիորդ թոռնեկին ձեռքը բռնելով՝ վերջին համբոյր մատուցանելու տաեն՝ իւր արտասուօք թրջելով վարդապետին աջը, կ ըսէր . « Հայր սուրբ, մեղի սուտ միբժմարանք մի տար. մենք զիտենք զուն ալ չես զառնար. Ֆրանկ-ներն պյտեղ քեզի չեն ուզեր . Աստուած անոնց տունք քանուէ » : — Տասը վայրկեան ճանապարհ կտրելէ վերջը՝ զլուխս զարձուցի վերջին հայեացը մ'ալ տալու իմ ծննդա-վայրին, և ահա աշքիս զպաւ նոյն տառա-պելոց խումբն, որ զես այնտեղ ճամբուն բե-րանը անշառք կեցած տիսուր զիրորով՝ կը նա-յէին վարդապետի կողմը, և սիտի նայէին զուցէ երկար մինչեւ որ ուղիղ ճանապարհը խոտքելով՝ անհետ ընէր բոլորովին նորա կերպարանաց հետքն նոցա սեւեած աշքե-րէն . իսկ արտերէն . . .

Եւ յիրաւի կէս ժամու ճանապարհէ վեր-ջը խոտքելով՝ հասանք ծանօթ բաժանման կտոր ամէն ուղեւորաց համար. ընզարձակ և բաւականին խոր առու մը խոխչելով կը կտրէր մեր ճամբան իւր լայնութեամբ, և բնակին սահմանազիծ մի կը զնէր մեր և մտերիմներու քայլերուն տաջեւ, ուր հարկ էր մեզ վերջին ովլոյննիս տալ վերջին ծանօթ գէմերու : Դրուս հանուեցան քանի մը սրուակներ և գաւաթիկներ օւզոյ, իրբու Ա-մէն մի կցերու այն երկար բարի երթի և ողամբ վերադարձի մաղթանաց՝ որք ժամե-րով հնչեր էին այն առաւօս մեր ականջնե-րուն մէջ : Դարձեալ համբոյրք, դարձեալ ար-տասունք, զարձեալ թաշինակաց հնուուն ծածանմունք, իսկ իրբու վերջին մաք-բար-ովլ մեր կողմէն քանի մի շառաշմունք հրա-ցանաձգութեանց վերջ զրին յետին հրաժե-տին : Ա՛լ անկէց եսքը զիւղի կանաչազարդ պարակներն ու ճիմի բուսականութեամբ ուսա-ճացած և ցորենի հասունցած արտերն ու բանջարանցներն անհետացան :

Միւս կողմէն առջեւնիս կը պարզուէր հիանալի տեսարան մը Դիլիման քաղաքա-

նանին պարսպաց մօտ ելեւէներուն մէջ : Դիլիման՝ Սալմաստի կեղունասելիին կը հա-մարուի այժմ, որ և օրէ օր աւելի բազմա-մօրդ կը դառնայ և աւելի առեւտրական կեղոսն՝ ի վնաս իւր մերձակայ Քօհնաշահա-րին (Հին Քաղաքին), որ է նախնեաց Զա-րեւանկ ընզարձակ և ծաղկած քաղաքին տը-խուր և մասնական մնացորդ մի, հանգերձ իւր Սուրբ Յովհաննէս բրուով և արարական բոլորաշէն խայտանամուկ ապակիքրոած կոմըն-տրագործ բարձր աշտարակովլ, որ նոյնպէս աւերակ մնացեր է մշակուած արտերուն մէջ և նախնի Հայոց ամենահին զերգեմնատնօվ, որոց ամենուն ալ մնարամասն Նկարազին Յուշազրոց սուբէլ Էջերու մէջ ամփափուած են : Դիլիմանի շորս կողմը պատած էին՝ կաղամա-խի ծառոց արուեստական զեղեցիկ և ընդար-ձակ անտառներով և արտերու և առուաց և ճանապարհաց եղերբու կարգա զէմ առ զէմ տնկուած վայրի սուենիների իւրա առ իխտ յա-ճախութեամբ շրջապատուած և զարդարուած շատ զիւղեր, որք Սալմաստի զալարի լեռնա-պաշտին վրայ կարծես ճիւղեր ճիւղերու կցած՝ իրեւ ճեռք ճեռք տուած պարաւոր զեղուհիք լինէին, և պայծառ արեգակն ճառագայթից ներքեւ զոյնզոյն աստիճանաւորութեամբ զա-լարութեան մերթ կանաչազուարթ մմտելով և մերթ սուկեցող ծիծաղելով՝ անցորդաց օրիսն ալ աշաց նման զրաւել ու զերել ուզէին : Հարաւային արեւմտեան կողմէն՝ Այսան, Սաւ-րա, յոսրովս, Հափթուան և Ակրեւան դիւղերն, և հրախային արեւելցէն ֆայա-չուկ, կալասար, Հախմերան, իսկ հարա-ւային արեւելեան դիէն՝ Ուլս, Մահկամ, Ջուածուկ, Սառնա, և հրսիսային արեւ-մուռքէն՝ Մարամեռիկ, Վարդան, Շաբակա, Մուանջըք, ուրիշ բազմաթիւ միջանկեալ մեծ-կակ և փորդիկ զիւղերու հետ միսաին, աւելի կամ պակաս հեռաւորութեամբ՝ մէկ կամ լաւ եւս մէկ քանի զալարի պարիսպներ ճեւա-ցուցեր էին Դիլիմանի հողաբլուր պարսպաց շորս բոլորը, ընդարձակ՝ որքան որ սրտեր աշք մի կարենար հեռածգել իւր աեսու-թիւնը :

Մէնք ճամբանիս կը շարունակէինք զէպ ՚ի հրսիսային արեւմտեաց . մէկ ու կէս ժամ-

Էր ձիերնիս քշեր էինք հասարակաց համարուած ճամփէն դուրս աւելի կարուկ ճանապարհներով, անընդհատ անցնելով առուներ և առուակներ, լճացեալ ջրեր ու հեղեղատներ փսացեալ ցամաք եւեւէներ, և արդէն մօտեցր էինք վերին գիշեին Մուանչըքի, երբ զգացինք մեր թիկունքին արազավայ ձիերու ամրակաց զըլբառոց մի. զունիս ետ դարձուցինք, և ամա բոպէի մէջ մեր քով հասան ցաղաքային-զինուորական համազգեատով երեց հեծելուոր, որբ իրենց խօսարհական յարզանց ողջյուր մատուցանելով վարդապետին, սկսան սանձել ձիերնուն աշխոյժը մեր հետ ուղեկցելով : Այլ ձիաւորներէն երկուքը կը վերաբերէին Սալմասի Սարփարասարին (Փրիտոնէից համար սահմանուած յատուկ գտաւորին), այսինքն՝ Պարսից արտաքին-գործոց նախարարին գործակասար Շահնապէ Մուանչէղ Միրզա Խանի, ապ որ կանխաւ զիրէ էր վարդապետն ճանապարի ապահովելիքն համար՝ իր արշիններէն երկու անձնին զինուած մեզի ուղեկից դրիկը մինչեւ խոյ, և երրորդն ալ Սալմասի միւսիկմանաց գտաւորին, այսինքն ներքին-գործոց նախարարի ներկայացուցիչն հեծեալներուն համազգեատը կը կրէր, որ մատենալով վարդապետին՝ մասոց գտաւորէն գորուած՝ բարի-երթի քաղաքավարի մաղթանաց համառօտ նամակ մը, և յայտնեց մի և նոյն ժամանակ որ ինչն իր բարձր պիտին պատուէր ընդուներ էր ուղեկցելու մինչեւ խոյ, և մեր այնաեղ ող և հանգիստ հասնելուն բարի լուրը վերապարձնելու իր ախրո՞յ վարդապետին երկոսողի մը, թէ պիտ և վարդապետն այդ ազնիւ մեծարանաց փոխարէն նեղեւ ուղեց, ինչպէս սովորութիւնն էր, առատ պարզեւ տալով՝ վերապարձնել դիլիմանի գտաւորին հեծելաւորը, բայց վերջինս հրաժարեցաւ խապա, թէ ընծայ ընդունելուն և թէ վերապահնակէն, յայտնելով թէ իրեն անպայման պատուէր եղած էր իր մեծէն մինչեւ խոյ ընկերելու, որուն պէտք էր հնազանդիլ. և սկսաւ իր ձին յառաջ քշել առ ՚ի պատի՛ իրը ունալիրայի պաշտօն կատարելու, Միւս երկու ձխաւորը մեր թիկունքէն կու զային մեզնից քիչ հեռաւորութեամբ.

և երբեմն երբեմն զիւղերու մօտեցրած ժամանակ՝ հրացաններ կ'արձակին, ինչպէս սովոր են ընել իրանի պետական պաշտօնէից համար՝ երբ զիւղի մէջ մանելու լինին, իրեւ ազգ մը զիւղականաց՝ ճանապարհներու վրայ մի կողմն քաշուելու, և հեռուէն ձեռքերնին կուրքի վրայ սեղմած՝ յարգանաց ՚ի նշան՝ զուի ինչեցնելու պատուաւոր անցորդին : Վարդապետը թէ պիտ եւ իրանի պետական անձնաւորութիւն չէր, այլ պարակական շողորդուորութիւն իրը սովորական օրէնքն ՚ի պոր կը զնէր՝ վերջը մեծաբարյ վարձարարութեան անկախիցիօ :

Մուանչըք գիւղի մէջ՝ թօւրպական սրբնանցի մ'առաջեւէն անցած ասեննիւ՝ նոյն սրճանցոցէն զուրս կաւ և իր գրան քով պատրաստ ձիուն քամալը ցատկից Մ'իրզա Ալիշան գավազն իր համազգեստով, նախ օւմանեան յարզանաց թէմէլլահի ձեւը կատարելով զէպ՝ ՚ի վարդապետը : Սա խոյի օսմանեան հիւպատին գրծակատարն էր Սալմաստի մէջ, և եկած այնաեղ կը սպասէր մեր հասնելուն, որ վարդապետին ուղեկից լինի մինչեւ խոյ ցաղաքը, իրեւն : ՚ի պատի բարձրաստին օսմանեան հպատակի և Սալմաստի օսմանեան հիւպատուական պատու պաշտօնէի . վասն զի այդ պաշտօնն ալ վարեր էր վարդապետն Սալմաստի մէջ 1892-94 տարիներում, երբ զեր խոյի մէջ օսմանեան հիւպատու չէր հաստատուած :

Այս ամէն նախազգուշութիւններն թէ վարդապետին և թէ տէրութեան պաշտօնէից կողմէն՝ զուր տեղ չէին. որովհետեւ այն ժամանակները, Նարեկզին Շահի սպանութիւն վերջը, զեր եւս նոր գահակաբեր էր Մ'ուզաֆէրէդղին Շահը, և աթոռոյ պարապութեան ժամանակ անկարգութիւն սիրող մարդկի համարձակութիւն էին առեր, և խումբեր կազմած՝ լեռներու մէջ և ճանապարհաց վրայ անցորդներ և կարաւաններ կը կողոպտէին, և օր չէր անցնիր որ զժբախտ ճանապարհորդաց արկածներ չպէտին :

Իրաւ է, քանի որ զիւղերու շրջանակին մէջ ճամփայ կը կարէինց՝ ոչինչ վունդ չէր կարելի սպասնալ մեզի, բայց Մուանչըք գիւղէն անզին՝ մինչեւ Սալմաստը խոյէն

պատող լեռնանցքի ստրուտ՝ դեռ մի ժամէն աւելի ճամբայ կար , և այդ ընդարձակ անշէն զաշասալայրի մէջ կարելի էր մտահայ լեռներէն վայրենի քրոգերու զինուած հրոսակներ մեր վրայ զային , կողաստէին սպաննէին և զարձեալ անհետանային իրենց լեռներուն մէջ ցրուած զիւղերը ։ Այսպէս նաեւ կարելի էր նոյն իսկ լեռնանցքին մի և կէս ժամու դըժուարուտ և անմարդի ճանապարհին վրայ ամրացած թափառական թուրք աւագակաց խումբ մը մեղ պատահէր , և նոյնաէս կողոպտէր սպաննէր և անպատուհաս մնար . Այդ տեսակ զէպքեր Պարսկաստանի և մանաւանդ Սալմասոի մէջ՝ սոլյուրական արկածներ կամ օրական հասարակ պատահարներ համարուելով՝ խոհեմ սոլեւորք պէտք էին կանխաս զգուշանալ : Ռուսի քաց 'ի վերայիշեալ շրոս պաշտօնական հեծեալներէն , մենք երենիսն ալ զինուած էինք հրացանով և զամայով . իսկ վարդապետը կը տանէր իր վրայ ժած կուած փոքրիկ վեցհարուածեան մը , փամ փուշտներով լի քեամարով մը՝ զոր զգեստին ներգետ իրեւն գոտի կապած էր մէջքը :

Դեռ երեց ամիս առաջ ճանապարհին վրայ աւազակներու ձեռքն ընկեր էին աւրող կարաւանի մը հետ նաեւ իմ այժմեան ուղեկից խոսրութից Գէորգ երիտասարդն իր հօրեղօր որդույն հետ և նաեւ վարդապետի եղայրն , երբ մի և նոյն օրը վերջինս Սալմասաէն խոյ կը գնար , իսկ առաջիններն խոյէն Սալմասա կը վերապանային՝ ուր զնացեր էին կարեւոր գործոյ մը համար՝ վարդապետն ուղարկուելով , վերապարձին՝ իրենց ուղեկից ունելով նաեւ խոյի սսմանեան հրապարին Ալաքքար անունով զավազն , որ Սալմաստէն խոյ տարած էր օսմանեան հպատակ յանցաւոր մը և Սալմասա կը զառնար : — Այժմ վերոյիշեալ ինչ հայրենակից Գէորգ երիտասարդի փափացն էր՝ որ այդ մարդամախ լեռնանցքէն խոտորելով , որուն թուրքերը Մուանջըքի գեադուկ անունը կու տան , թէպէտ և աւելի երկար՝ բայց ապահովագոյն ուրիշ լեռնանցքէ մ'երթանք զէպ 'ի խոյ , թէպէտ և ամէն կողմ ալ համասարապէտ նոյնպիսի պատահարք կրնային հանդիպիլ . բայց վարդապետի քաջալերութիւնն և ան-

վախ արիտեթիւնն՝ բարի յոյս և ապահովութեան վատահութիւն տուամ մեզ . մանաւանդ որ ինքը վարդապետը կը փափաքէր այն աւազակութեան արկածի տեղույն վրայ լսել Գէորգէն՝ իւր եղբօր և նորա ընկերակցաց կողոպտէլուն տեղազրական նկարագիրը :

Ազծենիս զեռ քառորդ ժամու ճանապարհ կար լեռնուան հաննելու ։ Այստեղ այլ եւս չէին տեսնուուր գիւղորայց այնպէս խիտ առ խիտ և կամ զեղեցիկ կանչչութեամբ զարգարուած՝ ինչպէս Սալմաստի կերպունը . այլ հեռուն լեռնայշթային ստորոտին վրայ զէպ 'ի մեր աղակողմը կը նշմարէինք Զիանի թուրքաբնակ մեծ զիւղի պարտէզները , իսկ ձափ կողմերնիս կաւաշէն Հիւղերով և առանց կանաչութեան քանի մ'անշան և վայրենի զիւղեր , որոց չներու ոռնալու ձայնը հեռուն ականչնիս կը հասնէր : Դիմացնիս լեռանց զար 'ի վերին վրայ տեղ աեղ խոսակէտ տարածութիւններ կը պարզուէին , և քարուա ամայութեանց մեռելատիպ մխուր տեսարանին կենդանութիւն կու տային ոչ սակաւ արածող ոյխարներու և կուլերու նախիրներ , որոց ման՝ հաստ թիրը ձեռքբերնին , իւնչարը գոտինին և ատրճանակը լցցուն առձեռնապատրաստ կը հակէին քանի մը թուրք հովիւներ մօստակայ գեղեցերու : Շատ անկամ այդ հովիւներն իրենք ճարսիկ զողեր և փորբիկ ասազակներ են և անպատսպար ուղեւորի որսորդներ , երբ աղքատ թուրքեր խոյէն զէպ 'ի Սալմաստ և կամ ընդհակառակին՝ իշարձ փայտ կամ աղ և կամ միրգեր զաւուէ գաւառ անցնեն վաճառելու : Այդ հովիւ փորբիկ աւազակներու պահանջն ընդհանրապէտ շատ համեստ կը լինի այդ անցորդներէն . նորա ոչ կը սպաննեն և ոչ ալ կը մերկացընեն , այլ կը գահանան երբեմն յաւանակն իրենց սեփականելով , երբեմն քանի մը զառն սեր փողով որ անցորդին մօս գըտնուի , և կամ երբեմն նորա ճանապարհի գործածութեան համար վեր ասած ծիխախոտը կէս 'ի էին իրենց և ուղեւորի մէջ եղբայրաբար բաժաննելով :

Շարայարելի